4) նշանակված մարմինը գնահատում է որակի համակարգը՝ որոշելու համար, թե, արդյո՞ք, այն բավարարում է սույն ընդ 5-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերում նշված պահանջները: Այն պետք է ենթադրի համապատասխանություն նշված պահանջայինքն՝ որակի համակարգի տարրերը պետք է համապատասխանեն փոխկապակցված ստանդարտների և (կամ) տեխնիկա մասնագրերի համապատասխան դրույթներին.

5) ի լրումն որակի կառավարման համակարգերում ունեցած փորձին՝ աուդիտ իրականացնող թիմում պետք է լինի համա արտադրանքի ոլորտի և տեխնոլոգիաների գնահատման փորձառությամբ ու տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջ մագությամբ առնվազն մեկ անդամ: Աուդիտի գործընթացը ներառում է գնահատման նպատակով այցելությունն արտադրո Աուդիտ իրականացնող թիմը վերանայում է սույն ընթացակարգի 2-րդ կետում նշված տեխնիկական փաստաթղթերը, որոնք որ արտադրողը կարող է նույնականացնել տեխնիկական կանոնակարգի համապատասխան պահանջները և իրականացնել ւ փորձաքննություն՝ նշված պահանջներին արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով.

6) որոշման մասին ծանուցվում է արտադրողին: Ծանուցման մեջ նշվում են աուդիտի մասին եզրակացությունը և գնահա վերաբերյալ հիմնավորված որոշումը.

7) արտադրողը պարտավորվում է իրականացնել հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները և պ դրանց համարժեքությունն ու արդյունավետությունը.

8) արտադրողը որակի համակարգը հաստատող՝ նշանակված մարմնին տեղեկացնում է որակի համակարգում նախատվ փոփոխությունների մասին.

9) նշանակված մարմինը գնահատում է արաջարկվող բոլոր փոփոխությունները և ընդունում որոշում այն մասին, թե, այ փոփոխված որակի համակարգը կշարունակի՝ բավարարել սույն ընթացակարգի 5-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմա պահանջները, թե՛ անհրաժեշտ է իրականացնել վերագնահատում.

10) նշանակված մարմինն արտադրողին ծանուցում է իր որոշման մասին: Ծանուցման հետ միասին ներկայացվում են փորձաքննության մասին եզրակացությունը և գնահատման վերաբերյալ հիմնավորված որոշումը:

6. Նշանակված մարմնի պատասխանատվությամբ իրականացվող հսկողության նպատակը համոզվելն է, որ արտադրող ամբողջովին կատարում է հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները՝

1) արտադրողը գնահատման նպատակով թույլ է տալիս նշանակված մարմնին մուտք գործել արտադրության, տեխնիկա հսկողության, փորձարկումների և պահեստավորման տարածքներ և վերջինիս տրամադրել բոլոր անհրաժեշտ տեղեկությունն մասնավորապես՝

- ա. որակի համակարգին վերաբերող փաստաթղթեր,
- բ. սույն ընթացակարգի 2-րդ կետով սահմանված տեխնիկական փաստաթղթեր,
- գ. որակի վերաբերյալ գրառումներ, ինչպես, օրինակ, տեխնիկական հսկողության մասին հաշվետվություններ և փորձարկ տրամաշափարկման (կալիբրավորման) ու ներգրավված աշխատողների որակավորման մասին տվյալներ.

2) նշանակված մարմինը պարբերաբար պետք է իրականացնի աուդիտ՝ համոզվելու համար, թե, արդյո՞ք, արտադրողը ւ և կիրառում է որակի համակարգը, և արտադրողին պետք է տրամադրի հաշվետվություն աուդիտի արդյունքների մասին.

3) նշանակված մարմինը կարող է նաև անսպասելի այցելել արտադրողին: Այդպիսի այցելությունների ժամանակ, անհրս դեպքում, նա իրականացնում կամ պատվիրում է արտադրանքի փորձարկումների իրականացումը, որպեսզի պարզի, թե, արս համակարգը պատշաճ կերպով է գործում.

4) նշանակված մարմինն արտադրողին տրամադրում է հաշվետվություն այցելության արդյունքների մասին, իսկ փորձալ իրականացման դեպքում՝ նաև փորձարկման մասին արձանագրությունը:

7. Արտադրողը յուրաքանչյուր արտադրանքին մակնշում է տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ պահանջվող համապատասխանության ազգային նշանը և սույն ընթացակարգի 5-րդ կետում նշված՝ նշանակված մարմնի պատասխանա ներքո՝ վերջինիս նույնականացման կողը, եթե արտադրանքը համապատասխանում է արտադրանքի տեխնիկական կանոնա կիրառելի պահանջներին: Արտադրողն արտադրանքի յուրաքանչյուր մոդելի համապատասխանության համար կազմում է համապատասխանության մասին գրավոր հայտարարագիր, որը պետք է հասանելի լինի պետական կառավարման մարմննն արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում: Համապատասխանության մասին գրավոր հայտարարագիրը հնարավորություն է տալիս նույնականացնելու այն արտադրանքի մոդելը, որի համար այն կազմվել է: Համապատասխանութ գրավոր հայտարարագրի պատճենը տրամադրվում է համապատասխան մարմիններին՝ համապատասխան պահանջի դեպք 8. Արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո առնվազն 10 տարվա ընթացքում ապահովում է հետևյալ փաստս հասանելիությունը պետական կառավարման մարմիններին՝

- 1) սույն ընթացակարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը.
- 2) սույն ընթացակարգի 5-րդ կետի 8-10-րդ ենթակետերում նշված՝ հաստատված փոփոխությունները.
- 3) նշանակված մարմնի կողմից սույն ընթացակարգի 5-րդ կետի 8-10-րդ, 6-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված որոշո հաշվետվությունները:

9. Յուրաքանչյուր նշանակված մարմին իր նշանակող մարմնին տեղեկացնում է որակի համակարգերի հաստատումների կորցրած ճանաչելու մասին և նշանակող մարմին պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության ներկայացնում է որակի համա մերժման, կասեցման և ուժը կորցրած ճանաչելու վավերացումների ցանկը: Յուրաքանչյուր նշանակված մարմին այլ նշանակ մարմինների տեղեկացնում է որակի համակարգի հաստատման, մերժման, կասեցման, ուժը կորցրած ճանաչելու, իսկ անհրս

դեպքում՝ որակի համակարգի հաստատման մասին:

10. Սույն ընթացակարգի 3-րդ կետով, 5-րդ կետի 1-ին, 8-10-րդ, 6-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանված արտադրող պարտականությունները կարող են իրականացվել նրա լիազոր ներկայացուցչի կողմից՝ արտադրողի անունից և պատասխանատվությամբ, եթե դրանք սահմանված են լիազոր ներկայացուցչի լիազորագրով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Կ

Հավելված N 11
ՀՀ կառավարության 2014 թվա
հունվարի 16-ի N 56-Ն որոշ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Ե

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արտադրանքի որակի ապահովման վրա հիմնված տեսակի համապատասխանությունը համապատասխան գնահատման ընթացակարգի մի մասն է, որի միջոցով արտադրողն իրականացնում է սույն ընթացակարգի 2-րդ և 5-րդ կետի սահմանված պարտականությունները և միայն իր պատասխանատվության ներքո երաշխավորում և հայտարարում է, որ տվյալ արտադրանքը համապատասխանում է արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատում նկարագրված տեսակին բավարարում է վերջինիս նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջները:

2. Արտադրողը վերջնական արտադրանքի տեխնիկական հսկողության և արտադրանքի փորձարկման համար գործածու ընթացակարգի 3-րդ կետով սահմանված որակի հաստատված համակարգ, որը և ենթակա է հսկողության, ինչպես սահմանվել է կետով:

3. Արտադրողն իր հայեցողությամբ նշանակված մարմին հայտ է ներկայացնում տվյալ արտադրանքի համար.

- 1) որակի համակարգի գնահատման համար հայտը ներառում է տեղեկություններ հետևյալի մասին՝
 - ա. արտադրողի անվանումը և գտնվելու վայրը, իսկ այն դեպքում, երբ հայտը ներկայացվում է լիազոր ներկայացուցչի կողմից, և բնակության վայրը,
 - բ. գրավոր հայտարարագիր, որ նույն հայտը չի ներկայացվել մեկ այլ նշանակված մարմին,
 - գ. արտադրանքի նախատեսված տեսակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն,
 - դ. որակի համակարգի վերաբերյալ փաստաթղթեր,
 - ե. հաստատված տեսակի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթեր և արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատները.

2) որակի համակարգն ապահովում է արտադրանքի համապատասխանությունն արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատում ներկայացված տեսակին և բավարարում է դրա նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջները:

3) արտադրողի կողմից ընդունված բոլոր տարրերը, պահանջները և դրույթները պետք է փաստաթղթավորել համակարգ պատշաճ՝ գրավոր քաղաքականությունների, ընթացակարգերի և հրահանգների տեսքով: Որակի համակարգի փաստաթղթեր ենթադրում են որակին առնչվող ծրագրերի, պլանների, ձեռնարկների և գրանցումների միատեսակ մեկնաբանություններ և պլանների համարժեք նկարագրություն՝

- ա. արտադրանքի որակին առնչվող պատասխանատվությունների և իրավասությունների կազմակերպչական կառուցված նպատակների,
- բ. արտադրությունից հետո իրականացվող փորձաքննությունների և փորձարկումների,
- գ. որակին վերաբերող գրառումների, ինչպես, օրինակ, իրականացված տեխնիկական հսկողության հաշվետվության, փոշի տվյալների, տրամաչափարկման (կալիբրավորման) տվյալների, աշխատակազմի որակավորման մասին հաշվետվությունները,
- դ. որակի համակարգի արդյունավետ գործունեության մոնիթորինգի միջոցների.
- 4) նշանակված մարմինը գնահատում է որակի համակարգը՝ որոշելու համար, թե, արդյոք, այն բավարարում է սույն ընթացակարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված պահանջները: Այն ենթադրում է համապատասխանություն նշված պահանջներին որակի համակարգի տարրերը պետք է համապատասխանեն փոխկապակցված ստանդարտների և (կամ) տեխնիկական մասնագրության համապատասխան դրույթներին.

5) ի լրումն որակի կառավարման համակարգերում ունեցած փորձին՝ առողիտ իրականացնող թիմում պետք է լինի համա արտադրանքի ոլորտի և տեխնոլոգիաների գնահատման փորձառությամբ և տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջները իմացությամբ առնվազն մեկ անդամ.

6) առողիտի գործընթացը ներառում է գնահատման այցելություն արտադրողի տարածք: Առողիտ իրականացնող թիմը վճարում է սույն ընթացակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունում նշված տեխնիկական փաստաթղթերը, որոնք կհաստատարողը կարող է նույնականացնել տեխնիկական կանոնակարգի համապատասխան պահանջները և իրականացնել անհատական

փորձաքննություն՝ նշված պահանջներին արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով.

7) որոշումը ծանուցվում է արտադրողին: Ծանուցման մեջ նշվում է աուդիտի եզրակացությունը և գնահատման հիմնավորումը.

8) արտադրողը պարտավորվում է իրականացնել հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները և պրահանց համարժեքությունն ու արդյունավետությունը.

9) արտադրողը որակի համակարգը հաստատող նշանակված մարմնին տեղեկացնում է հաստատված որակի համակարգ նախատեսված բոլոր փոփոխությունների մասին.

10) նշանակված մարմինը գնահատում է առաջարկվող բոլոր փոփոխությունները և որոշում ընդունում այն մասին, թե ար փոփոխված որակի համակարգը կշարունակի բավարարել սույն ընթացակարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահման պահանջները, թե անհրաժեշտ է իրականացնել վերագնահատում.

11) նա ծանուցում է արտադրողին իր որոշման մասին: Ծանուցման հետ ներկայացվում են փորձաքննության եզրակացու գնահատման հիմնավորված որոշումը:

4. Նշանակված մարմնի պատասխանատվությամբ իրականացվող հսկողության նպատակը համոզվելն է, որ արտադրող ամբողջովին կատարում է հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները.

1) գնահատման նպատակով արտադրողը թույլ է տալիս նշանակված մարմնին մուտք գործել արտադրության, տեխնիկա հսկողության, փորձարկումների և պահեստավորման տարածքներ և վերջինիս տրամադրում է բոլոր անհրաժեշտ տեղեկությու մասնավորապես՝

- ա. որակի համակարգի փաստաթղթեր,
- բ. որակի վերաբերյալ գրառումներ, ինչպես, օրինակ, տեխնիկական հսկողության հաշվետվություններ և փորձարկման, տրամաշափարկման (կալիբրավորման) ու ներգրավված աշխատողների որակավորման տվյալներ.

2) նշանակված մարմինը պարբերաբար պետք է իրականացնի աուդիտ՝ ստուգելու համար, թե, արդյոք, արտադրողը պս կիրառում է որակի համակարգը և արտադրողին պետք է տրամադրի հաշվետվություն աուդիտի արդյունքների մասին.

3) նշանակված մարմինը կարող է նաև անսպասելի այցելել արտադրողին: Այդ տեսակ այցելությունների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, նա կարող է իրականացնել կամ պատվիրել արտադրանքի փորձարկումներ, որպեսզի պարզի, որակի համակարգը պատշաճ կերպով է գործում: Նշանակված մարմինը տրամադրում է արտադրողին հաշվետվություն այց արդյունքների մասին, իսկ փորձարկումների իրականացման դեպքում նաև՝ փորձարկման արձանագրությունը:

5. Արտադրողը յուրաքանչյուր արտադրանքին մակնշում է տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջվող համապատասխանության ազգային նշանը և սույն ընթացակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված նշանակված մարմնի պատասխանատվության ներքո՝ վերջինիս նույնականացման ծածկագիրը, եթե արտադրանքը համապատասխանում է արտու տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին և համապատասխանում է արտադրանքի տեխնիկական հսկողությամ ներտիֆիկատում ներկայացված տեսակին.

1) արտադրողն արտադրանքի յուրաքանչյուր մոդելի համապատասխանության համար կազմում է համապատասխանու գրավոր հայտարարագիր, որը պետք է հասանելի լինի պետական կառավարման մարմիններին արտադրանքի շուկայահանու տարվա ընթացքում: Համապատասխանության մասին գրավոր հայտարարագիրը հնարավորություն է տալիս նույնականացն արտադրանքի մոդելը, որի համար այն կազմվել է.

2) համապատասխանության մասին գրավոր հայտարարագրի պատճենը տրամադրվում է համապատասխան մարմիննե համապատասխան պահանջի դեպքում:

6. Արտադրողը, արտադրանքի շուկայահանումից հետո առնվազն 10 տարվա ընթացքում ապահովում է հետևյալ փաստ հասանելիությունը պետական կառավարման մարմիններին՝

- ա. սույն ընթացակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը,
- բ. սույն ընթացակարգի 3-րդ կետի 9-11-րդ ենթակետերում նշված հաստատված փոփոխությունները,
- գ. նշանակված մարմնի կողմից սույն ընթացակարգի 3-րդ կետի 9-11-րդ ենթակետերում, 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակե նշված որոշումները և հաշվետվությունները:

7. Յուրաքանչյուր նշանակված մարմին տեղեկացնում է իր նշանակող մարմնին որակի համակարգերի հաստատումների կորցրած ճանաչելու մասին և պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության նշանակող մարմնին ներկայացնում է որակի համ մերժման, կասեցման կամ ուժը կորցրած ճանաչելու վավերացումների ցանկը.

1) յուրաքանչյուր նշանակված մարմին տեղեկացնում է այլ նշանակված մարմիններին որակի համակարգի հաստատման կասեցման, դադարեցման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ որակի համակարգի հաստատման մասին:

8. Սույն ընթացակարգի 3-րդ կետի 1-ին, 9-11-րդ ենթակետերով, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված արտադրողի պարտականությունները կարող են իրականացվել նրա լիազոր ներկայացուցչի կողմից՝ արտադրողի անունից և պատասխանատվությամբ, եթե դրանք սահմանված են ներկայացուցչի լիազորագրով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Ե 1

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀ

1. Վերջնական արտադրանքի տեխնիկական հսկողության և փորձարկման որակի ապահովումը

համապատասխանության գնահատման ընթացակարգ է, որի միջոցով արտադրողն իրականացնում է սույն ընթացակարգի 2-րդ կետերով սահմանված պարտականությունները, միայն իր պատասխանատվությամբ երաշխավորում և հայտարարում է, թե արտադրանքը համապատասխանում է վերջինիս նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

2. Արտադրողը մշակում է տեխնիկական փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու արտադրանքի համապատասխանությունը կիրառելի պահանջներին և ներառում են ռիսկերի համարժեք վերլուծություն և գնահատում.

1) տեխնիկական փաստաթղթերը սահմանում և հնարավորության դեպքում նաև ներառում են արտադրանքի նախագծման արտադրության և շահագործման վերաբերյալ անհրաժեշտ պահանջներ.

2) տեխնիկական փաստաթղթերն իրենց կիրառելիության սահմաններում առնվազն ներառում են հետևյալ բաղադրիչները՝
ա. արտադրանքի ընդհանուր նկարագրություն,

բ. նախագծման և արտադրության գծագրեր, ենթահանգույցների, բաղադրիչների և շրջանների ընթացակարգեր,

գ. արտադրանքի շահագործումը (օգտագործումը), նշված գծագրերը և ընթացակարգերն ընկալելու համար անհրաժեշտ նկարագրություններ և բացատրություններ,

դ. փոխկապակցված ստանդարտների և (կամ) անհրաժեշտ տեխնիկական մասնագրերի ցանկ, որոնց հղումները հրապարակված ստանդարտների ազգային մարմնի կողմից, և որոնք կիրառվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն: Փոխկապակցված ստանդարտների մասնակիորեն կիրառման դեպքում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այն հաստատվածները, որ կիրառվել են այդ արտադրանքի համար.

3) եթե չեն կիրառվել փոխկապակցված ստանդարտները, ապա ներկայացվում է այն լուծումների նկարագրությունը, որոնք ապահովվում է տեխնիկական կանոնակարգի պահանջների բավարարումը՝

ա. նախագծի հաշվարկների արդյունքները, տեղեկատվություն իրականացված փորձարկումների վերաբերյալ,

բ. իրականացված փորձարկումների արձանագրություններ:

3. Արտադրողը, արտադրանքի շուկայահանումից հետո առնվազն 10 տարվա ընթացքում պետք է ապահովի փաստաթղթի հասանելիությունը պետական կառավարման մարմիններին:

4. Արտադրողը վերջնական արտադրանքի տեխնիկական հսկողության և արտադրանքի փորձարկման համար գործածու ընթացակարգի 5-րդ կետով սահմանված որակի հաստատված համակարգ, որը և ենթակա է հսկողության, ինչպես սահմանված ընթացակարգի 6-րդ կետով:

5. Արտադրողն իր հայեցողությամբ նշանակված մարմին հայտ է ներկայացնում տվյալ արտադրանքի որակի համակարգ գնահատման համար.

1) հայտը ներառում է տեղեկություններ հետևյալի մասին՝

ա. արտադրողի անվանումը և գտնվելու վայրը, իսկ այն դեպքում, երբ հայտը ներկայացվում է լիազոր ներկայացուցչի կողմից՝ անունը և բնակության վայրը,

բ. գրավոր հայտարարագիր, որ նույն հայտը չի ներկայացվել մեկ այլ նշանակված մարմին,

գ. արտադրանքի նախատեսված տեսակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն,

դ. որակի համակարգի վերաբերյալ փաստաթղթեր,

ե. սույն ընթացակարգի 2-րդ կետով սահմանված տեխնիկական փաստաթղթեր.

2) որակի համակարգն ապահովում է արտադրանքի համապատասխանությունը դրա նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին.

3) արտադրողի կողմից ընդունված բոլոր տարրերը, պահանջները և դրույթները պետք է փաստաթղթավորել համակարգ պատշաճ՝ գրավոր քաղաքականությունների, ընթացակարգերի և հրահանգների տեսքով.

4) որակի համակարգի փաստաթղթերը ենթադրում են որակին առնչվող ծրագրերի, պլանների, ձեռնարկների և գրանցում միատեսակ մեկնաբանություններ և պետք է ներառեն համարժեք նկարագրություն՝

ա. արտադրանքի որակին առնչվող պատասխանատվությունների և իրավասությունների կազմակերպչական կառուցված նպատակների,

բ. արտադրությունից հետո իրականացվող փորձարկումների և փորձարկումների,

գ. որակին վերաբերող գրառումների, ինչպես, օրինակ, իրականացված տեխնիկական հսկողության հաշվետվության, փոշի տվյալների, տրամաչափարկման (կալիբրավորման) տվյալների, աշխատակազմի որակավորման մասին հաշվետվություններ

դ. որակի համակարգի արդյունավետ գործունեության մոնիթորինգի միջոցների:

5) նշանակված մարմինը գնահատում է որակի համակարգը՝ որոշելու համար, թե, արդյոք, այն բավարարում է սույն ընթացակարգի 5-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված պահանջները: Այն պետք է ենթադրի համապատասխանություն նշված պահանջներին

որակի համակարգի տարբերը պետք է համապատասխանեն փոխկապակցված ստանդարտների և (կամ) տեխնիկական մասն համապատասխան դրույթներին.

6) ի լրումն որակի կառավարման համակարգերում ունեցած փորձին՝ աուդիտ իրականացնող թիմում պետք է լինի համա արտադրանքի ոլորտի և տեխնոլոգիաների գնահատման փորձառությամբ և տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահան իմացությամբ առնվազն մեկ անդամ.

7) աուդիտի գործընթացը ներառում է գնահատման այցելություն արտադրողի տարածք: Աուդիտ իրականացնող թիմը վճ առյն ընթացակարգի 2-րդ կետում նշված տեխնիկական փաստաթղթերը, որոնք կհաստատեն, որ արտադրողը կարող է նույն տեխնիկական կանոնակարգի համապատասխան պահանջները և իրականացնել անհրաժեշտ փորձաքննություն՝ նշված պա արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով: Որոշումը ծանուցվում է արտադրողին: Ծանուցման մե աուդիտի եզրակացությունների և գնահատման հիմնավորված որոշումը.

8) արտադրողը պարտավորվում է իրականացնել հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները և պ դրանց համարժեքությունն ու արդյունավետությունը.

9) արտադրողը որակի համակարգը հաստատող նշանակված մարմնին տեղեկացնում է հաստատված որակի համակարգ նախատեսված բոլոր փոփոխությունների մասին.

10) նշանակված մարմինը գնահատում է առաջարկվող բոլոր փոփոխությունները և որոշում ընդունում այն մասին, թե, ս փոփոխված որակի համակարգը կշարունակի բավարարել սույն ընթացակարգի 5-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանվաճ պահանջները, թե անհրաժեշտ է իրականացնել վերագնահատում.

11) նշանակված մարմինը ծանուցում է արտադրողին իր որոշման մասին: Ծանուցման հետ ներկայացվում են փորձաքնն եզրակացությունը և գնահատման հիմնավորված որոշումը:

6. Նշանակված մարմնի պատասխանատվությամբ իրականացվող հսկողության նպատակը համոզվելն է, որ արտադրող ամբողջովին կատարում է հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները.

1) գնահատման նպատակով արտադրողը թույլ է տալիս նշանակված մարմնին մուտք գործել արտադրության, տեխնիկա հսկողության, փորձարկումների և պահեստավորման տարածքներ և վերջինիս տրամադրում է բոլոր անհրաժեշտ տեղեկությո՛ մասնավորապես՝

- ա. որակի համակարգի փաստաթղթեր,
- բ. սույն ընթացակարգի 2-րդ կետով սահմանված տեխնիկական փաստաթղթեր,
- գ. որակի վերաբերյալ գրառումներ, ինչպես, օրինակ, տեխնիկական հսկողության հաշվետվություններ և փորձարկման, տրամաչափարկման (կալիբրավորման) ու ներգրավված աշխատողների որակավորման տվյալներ.

2) նշանակված մարմինը պարբերաբար պետք է իրականացնի աուդիտ ստուգելու համար, թե, արդյոք, արտադրողը պաճ կիրառում է որակի համակարգը և արտադրողին պետք է տրամադրի հաշվետվություն աուդիտի արդյունքների մասին.

3) նշանակված մարմինը կարող է նաև անսպասելի այցելել արտադրողին: Այդ տեսակ այցելությունների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, նա իրականացնում կամ պատվիրում է արտադրանքի փորձարկումների իրականացումը, որպճ թե, արդյոք, որակի համակարգը պատշաճ կերպով է գործում: Նշանակված մարմինը տրամադրում է արտադրողին հաշվետ այցելության արդյունքների մասին, իսկ փորձարկումների իրականացման դեպքում նաև՝ փորձարկման արձանագրությունը:

7. Արտադրողը յուրաքանչյուր արտադրանքին մակնշում է տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջվող համապատասխանության ազգային նշանը և սույն ընթացակարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված նշանակված մարմնի պատասխանատվության ներքո՝ վերջինիս նույնականացման կողը, էթե արտադրանքը համապատասխանում է արտադրան տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին.

1) արտադրողն արտադրանքի յուրաքանչյուր մոդելի համապատասխանության համար կազմում է համապատասխանու գրավոր հայտարարագիր, որը պետք է հասանելի լինի պետական կառավարման մարմիններին արտադրանքի շուկայահանու տարվա ընթացքում: Համապատասխանության մասին գրավոր հայտարարագիրը հնարավորություն է տալիս նույնականացն արտադրանքի մոդելը, որի համար այն կազմվել է.

2) համապատասխանության մասին գրավոր հայտարարագրի պատճենը տրամադրվում է համապատասխան մարմիննե համապատասխան պահանջի դեպքում:

8. Արտադրողը, արտադրանքի շուկայահանումից հետո առնվազն 10 տարվա ընթացքում ապահովում է հետևյալ փաստ հասանելիությունը պետական կառավարման մարմիններին՝

- ա. սույն ընթացակարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը,
- բ. սույն ընթացակարգի 5-րդ կետի 9-11-րդ ենթակետերում նշված հաստատված փոփոխությունները,
- գ. նշանակված մարմնի կողմից սույն ընթացակարգի 5-րդ կետի 9-11-րդ ենթակետերում, 6-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակեճ նշված որոշումները և հաշվետվությունները:

9. Յուրաքանչյուր նշանակված մարմին տեղեկացնում է իր նշանակող մարմնին որակի համակարգերի հաստատումների կորցրած ճանաչելու մասին և պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության նշանակող մարմնին ներկայացնում է որակի համա մերժման, կասեցման կամ ուժը կորցրած ճանաչելու վավերացումների ցանկը.

1) յուրաքանչյուր նշանակված մարմին տեղեկացնում է այլ նշանակված մարմիններին որակի համակարգի հաստատմաճ կասեցման, դադարեցման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ որակի համակարգի հաստատման մասին:

10. Սույն ընթացակարգի 3-րդ կետով, 5-րդ կետի 1-ին, 9-11-րդ ենթակետերով, 7-րդ և 8-րդ կետերով սահմանվաճ արտա պարտականությունները կարող են իրականացվել նրա լիազոր ներկայացուցչի կողմից՝ արտադրողի անունից և պատասխանատվությամբ, էթե դրանք սահմանված են ներկայացուցչի լիազորագրով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Կ

Հավելված N 13
ՀՀ կառավարության 2014 թվա
հունվարի 16-ի N 56-Ն որոշ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Զ

ԱՐՏԱՂՐԱՆՔԻ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արտադրանքի հավաստման վրա հիմնված տեսակի համապատասխանությունը համապատասխանության ընթացակարգի մի մասն է, որի միջոցով արտադրողն իրականացնում է սույն ընթացակարգի 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահ պարտականությունները, և միայն իր պատասխանատվության ներքո երաշխավորում և հայտարարում է, որ սույն ընթացակա կետի դրույթների առարկա հանդիսացող արտադրանքը համապատասխանում է արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատում նկարագրված տեսակին և բավարարում է վերջինիս նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պ

2. Արտադրողը կիրառում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության և մոնիթորինգի գործընթացն ապա արտադրվող արտադրանքի համապատասխանությունն արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատում նկարա հաստատված տեսակին, ինչպես նաև դրանց նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

3. Հավաստում (proverka)՝ արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատում հաստատված տեսակին և համա տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման նպատակով արտադրողի կողմից ընտյ նշանակված մարմինն իրականացնում է անհրաժեշտ փորձաքննություն և փորձարկումներ.

1) սահմանված պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով փորձաքննությունը և փորձարկումն իրականացվում են արտադրողի ընտրությամբ կամ յուրաքանչյուր արտադրանքի համար, ինչպես սահմանված է սույն ընթա րդ կետում, կամ վիճակագրական հիմունքներով, ինչպես սահմանված է սույն ընթացակարգի 5-րդ կետում:

4. Համապատասխանության հավաստում յուրաքանչյուր արտադրանքի փորձաքննության և փորձարկման միջոցով՝ ամ արտադրանքի յուրաքանչյուր արտադրանք պետք է ենթարկվի փոխկապակցված ստանդարտներով և (կամ) տեխնիկական մ սահմանված փորձաքննության և համապատասխան փորձարկումների, կամ դրանց համարժեք փորձարկումների՝ արտադր տեխնիկական հսկողության սերտիֆիկատում նկարագրված տեսակին և տեխնիկական կանոնակարգով սահմանված պահան համապատասխանությունը հավաստելու նպատակով: Նման փոխկապակցված ստանդարտի բացակայության դեպքում համապատասխան նշանակված մարմինը որոշում է ընդունում իրականացվելիք համապատասխան փորձարկումների մասի՝

1) նշանակված մարմինն իրականացված փորձաքննության և փորձարկումների հիման վրա տրամադրում է համապատս սերտիֆիկատ և յուրաքանչյուր հաստատված արտադրանքի համար կցում է իր նույնականացման կողը կամ էլ իր ներքո թույ կցել իր նույնականացման կողը.

2) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում պահպանում է համապատասխանության սերտիֆիկատները՝ պետական կառավարման մարմինների ստուգումների համար:

5. Համապատասխանության վիճակագրական հավաստում՝ արտադրողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, ր արտադրական և մոնիթորինգի գործընթացն ապահովի արտադրության յուրաքանչյուր խմբաքանակի միասեռությունը (նույն արտադրանքը ներկայացնում է հավաստման՝ միասեռ (նույնատիպ) խմբաքանակի տեսքով.

1) յուրաքանչյուր խմբաքանակից պատահական ընտրությամբ վերցվում է նմուշ՝ տեխնիկական կանոնակարգով սահմա պահանջների համաձայն: Նմուշառված ամբողջ արտադրանքի յուրաքանչյուր արտադրանք պետք է ենթարկվի փոխկապակ ստանդարտներով և (կամ) տեխնիկական մասնագրերով սահմանված փորձաքննության, կամ համարժեք փորձարկումների՝ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով, ինչպես նս համար, թե տվյալ խմբաքանակն ընդունվում է, թե մերժվում: Նման փոխկապակցված ստանդարտի բացակայության դեպքո համապատասխան նշանակված մարմինը որոշում է ընդունում իրականացվելիք համապատասխան փորձարկումների մասի՝

2) եթե խմբաքանակն ընդունվում է, ապա խմբաքանակի ամբողջ արտադրանքը համարվում է հաստատված՝ բացառույ նմուշառված այն արտադրանքի, որոնց փորձարկման արդյունքները եղել են անբավարար: Նշանակված մարմինն իրականա փորձաքննության և փորձարկումների հիման վրա տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատ և յուրաքանչյուր հաստատված արտադրանքի համար կցում է իր նույնականացման կողը կամ էլ իր պատասխանատվության ներքո թույլատր նույնականացման կողը.

3) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում ապահովում է համապատասխանության սերտիֆիկատների հասանելիությունը պետական կառավարման մարմինների համար.

3) եթե խմբաքանակը մերժվում է, ապա նշանակված կամ իրավասու մարմինը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ալ խմբաքանակի շուկայահանումը կանխարգելելու համար: Խմբաքանակների հաճախակի մերժման դեպքում նշանակված մայ

է կասեցնել վիճակագրական հավաստումը և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

6. Համապատասխանության ազգային նշան և համապատասխանության հայտարարագիր՝ արտադրողը յուրաքանչյուր արտադրանքին մակնշում է տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջվող համապատասխանության ազգային նշանը և ընթացակարգի 3-րդ կետում նշված նշանակված մարմնի պատասխանատվության ներքո՝ վերջինիս նույնականացման կողմը, արտադրանքը համապատասխանում է արտադրանքի տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին և համապատասխանում է տեխնիկական հսկողության սերտիֆիկատում ներկայացված տեսակին:

1) արտադրողն արտադրանքի յուրաքանչյուր մոդելի համապատասխանության համար կազմում է համապատասխանող գրավոր հայտարարագիր, որը պետք է հասանելի լինի պետական կառավարման մարմիններին արտադրանքի շուկայահանու տարվա ընթացքում:

2) համապատասխանության մասին գրավոր հայտարարագիրը հնարավորություն է տալիս նույնականացնել այն արտադրողին, որի համար այն կազմվել է: Համապատասխանության մասին գրավոր հայտարարագրի պատճենը տրամադրվում է համապատասխան մարմիններին՝ համապատասխան պահանջի դեպքում:

3) սույն ընթացակարգի 3-րդ կետում նշված նշանակված մարմնի համաձայնության դեպքում և վերջինիս պատասխանաբար արտադրողը կարող է նաև արտադրանքին կցել նշանակված մարմնի նույնականացման կողմը:

7. Նշանակված մարմնի համաձայնությամբ և վերջինիս պատասխանատվությամբ արտադրողը կարող է նաև արտադրող նշանակված մարմնի նույնականացման կողմն արտադրանքի արտադրական գործընթացի ընթացքում:

8. Արտադրողի պարտականությունները կարող են իրականացվել իր լիազոր ներկայացուցչի կողմից՝ արտադրողի անուն պատասխանատվությամբ, եթե դրանք սահմանված են ներկայացուցչի լիազորագրով: Լիազոր ներկայացուցչին չի կարող կա ընթացակարգի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված արտադրողի պարտականությունները:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Կ

Հավելված N 14
ՀՀ կառավարության 2014 թվա
հունվարի 16-ի N 56-Ն որոշ

ԸՆԹԱՅԱԿԱՐԳ Զ 1

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արտադրանքի հավաստման վրա հիմնված համապատասխանությունը համապատասխանության գնահատման ընթացակարգ է, որի միջոցով արտադրողն իրականացնում է սույն ընթացակարգի 2-րդ կետով, 3-րդ կետով, 6-րդ կետի 1-ին և 7-րդ կետով սահմանված պարտականությունները, և իր պատասխանատվության ներքո երաշխավորում և հայտարարում է, որ արտադրանքը, որոնց վրա տարածվում են սույն ընթացակարգի 4-րդ կետով սահմանված դրույթները համապատասխանում են նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

2. Արտադրողը մշակում է տեխնիկական փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու արտադրանքի համապատասխանությունը կիրառելի պահանջներին և ներառում են ռիսկերի համարժեք վերլուծություն և գնահատում: Տեխնիկական փաստաթղթերը սահմանում և հնարավորության դեպքում նաև ներառում են արտադրանքի նախագծման արտադրության և շահագործման վերաբերյալ անհրաժեշտ պահանջներ:

- 1) տեխնիկական փաստաթղթերն իրենց կիրառելիության սահմաններում պետք է առնվազն ներառեն հետևյալ բաղադրիչները՝
 - ա. արտադրանքի ընդհանուր նկարագրություն,
 - բ. նախագծման և արտադրության գծագրեր, ենթահանգույցների, բաղադրիչների և շրջանների ընթացակարգեր,
 - գ. արտադրանքի շահագործումը (օգտագործումը), նշված գծագրերը և ընթացակարգերն ընկալելու համար անհրաժեշտ նկարագրություններ և բացատրություններ,
 - դ. փոխկապակցված ստանդարտների և (կամ) անհրաժեշտ տեխնիկական մասնագրերի ցանկ, որոնց հղումները հրապարակված ստանդարտների ազգային մարմնի կողմից, և որոնք կիրառվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն,
 - ե. փոխկապակցված ստանդարտների մասնակիորեն կիրառման դեպքում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հատվածները, որոնք որ տարածվել (կիրառվել) են այդ արտադրանքի համար.

- 2) եթե չեն կիրառվել փոխկապակցված ստանդարտները, ապա ներկայացվում է այն լուծումների նկարագրությունը, որոնք ապահովվում է տեխնիկական կանոնակարգի պահանջների բավարարումը՝
 - ա. նախագծի հաշվարկների արդյունքները, տեղեկատվություն իրականացված փորձաքննությունների վերաբերյալ,
 - բ. իրականացված փորձարկումների արձանագրություն.
- 3) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո առնվազն 10 տարվա ընթացքում ապահովում է տեխնիկական փաստաթղթերի հասանելիությունը պետական կառավարման մարմիններին:

3. Արտադրողը կիրառում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության և մոնիթորինգի գործընթացն ապահովի արտադրվող արտադրանքի համապատասխանությունը դրա նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին

4. Հավաստում՝ արտադրանքի տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին համապատասխանության հավաստակարգ արտադրողի կողմից ընտրված նշանակված մարմինն իրականացնում է անհրաժեշտ փորձաքննություն և փորձաքննությունները

1) նշված պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով փորձաքննությունը և փորձարկումներն իրականացվում են արտադրողի ընտրությամբ կամ յուրաքանչյուր արտադրանքի համար, ինչպես սահմանված է սույն ընթացակարգի կետում, կամ վիճակագրական հիմունքներով, ինչպես սահմանված է սույն ընթացակարգի 6-րդ կետում:

5. Համապատասխանության հավաստում յուրաքանչյուր արտադրանքի փորձաքննության և փորձարկման միջոցով սույն ընթացակարգի իմաստով՝

1) ամբողջ արտադրանքի յուրաքանչյուր արտադրանք՝ պետք է անհատապես ենթարկվի փոխկապակցված ստանդարտի (կամ) տեխնիկական մասնագրերով սահմանված փորձաքննության և համապատասխան փորձարկումների, կամ դրանց հավաստակարգումների՝ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով փորձարկված ստանդարտի և (կամ) տեխնիկական մասնագրերի բացակայության դեպքում համապատասխան նշանակված մարմինը որոշում է ընդունում իրականացվելիք համապատասխան փորձարկումների մասին:

2) նշանակված մարմինն իրականացված փորձաքննության և փորձարկումների հիման վրա տրամադրում է համապատասխանությունը սերտիֆիկատ և յուրաքանչյուր հաստատված արտադրանքի համար կցում է իր նույնականացման կողմ կամ էլ իր պատասխանատվության ներքո թույլատրում է կցել իր նույնականացման կողմ:

3) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում ապահովում է համապատասխանության սերտիֆիկատների հասանելիությունը պետական կառավարման մարմիններին:

6. Համապատասխանության վիճակագրական հավաստում սույն ընթացակարգի իմաստով՝

1) արտադրողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրական և մոնիթորինգի գործընթացներն և արտադրության յուրաքանչյուր խմբաքանակի միաստեղծությունը (նույնատիպ), և իր արտադրանքը ներկայացնում է հավաստի (նույնատիպ) խմբաքանակի տեսքով:

2) յուրաքանչյուր խմբաքանակից պատահական ընտրությամբ վերցվում է նմուշ՝ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համաձայն: Նմուշառված ամբողջ արտադրանքի յուրաքանչյուր արտադրանք պետք է անհատապես ենթարկվի փոխկապակցված ստանդարտներով և (կամ) տեխնիկական մասնագրերով սահմանված փորձաքննության և համապատասխան փորձարկման, կամ դրանց համարժեք փորձարկումների՝ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանությունը հավաստելու նպատակով ինչպես նաև որոշելու համար, թե տվյալ խմբաքանակն ընդունվում է, չէ՞, նման փոխկապակցված ստանդարտի և (կամ) տեխնիկական մասնագրերի բացակայության դեպքում համապատասխան նշանակված մարմինը որոշում է ընդունում իրականացվելիք համապատասխան փորձարկումների մասին:

3) եթե խմբաքանակն ընդունվում է, ապա խմբաքանակի ամբողջ արտադրանքը համարվում է հաստատված՝ բացառությամբ նմուշառված այն արտադրանքի, որոնց փորձարկման արդյունքները եղել են անբավարար:

4) նշանակված մարմինն իրականացված փորձաքննության և փորձարկումների հիման վրա տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատ և յուրաքանչյուր հաստատված արտադրանքի համար կցում է իր նույնականացման իր պատասխանատվության ներքո թույլատրում է կցել իր նույնականացման կողմ:

5) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում ապահովում է համապատասխանության սերտիֆիկատների հասանելիությունը պետական կառավարման մարմիններին,

6) եթե խմբաքանակը մերժվում է, ապա նշանակված կամ իրավասու մարմինը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցները՝ սխալ խմբաքանակի շուկայահանումը կանխարգելելու նպատակով:

7) խմբաքանակների հաճախակի մերժման դեպքում նշանակված մարմինը կարող է կասեցնել վիճակագրական հավաստի ձեռնարկել համապատասխան միջոցներ:

7. Արտադրողն յուրաքանչյուր արտադրանքին մակնշում է տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջվող համապատասխանության ազգային նշանը և սույն ընթացակարգի 4-րդ կետում նշված նշանակված մարմնի պատասխանատվությունը՝ կցում է վերջինիս նույնականացման կողմ, եթե արտադրանքը համապատասխանում է արտադրանքի տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին:

1) արտադրողն արտադրանքի յուրաքանչյուր մոդելի համապատասխանության համար կազմում է համապատասխան գրավոր հայտարարագիր, որը պետք է հասանելի լինի պետական կառավարման մարմիններին արտադրանքի շուկայահանում տարվա ընթացքում: Համապատասխանության մասին գրավոր հայտարարագիրը հնարավորություն է տալիս նույնականացնել արտադրանքի մոդելը, որի համար այն կազմվել է:

2) համապատասխանության մասին գրավոր հայտարարագրի պատճենը տրամադրվում է համապատասխան մարմինն համապատասխան պահանջի դեպքում:

3) սույն ընթացակարգի 5-րդ կետում նշված նշանակված մարմնի համաձայնության դեպքում և վերջինիս պատասխանաբար արտադրողը կարող է նաև արտադրանքին կցել նշանակված մարմնի նույնականացման կողմ:

8. Նշանակված մարմնի համաձայնությամբ և վերջինիս պատասխանատվությամբ արտադրողը կարող է նաև արտադրող նշանակված մարմնի նույնականացման կողմ արտադրանքի արտադրական գործընթացի ընթացքում:

9. Արտադրողի պարտականությունները կարող են իրականացվել իր լիազոր ներկայացուցչի կողմից՝ արտադրողի անուն պատասխանատվությամբ, եթե դրանք սահմանված են ներկայացուցչի լիազորագրով: Լիազոր ներկայացուցչին չի կարող կատարվել ներթացակարգի 3-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված արտադրողի պարտականությունները:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Կ

Հավելված N 15
ՀՀ կառավարության 2014 թվա
հունվարի 16-ի N 56-Ն որոշ

ԸՆԹԱՅԱԿԱՐԳ Է

ՄԻԱՎՈՐԻ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Միավորի հավաստման վրա հիմնված համապատասխանությունը** համապատասխանության գնահատման ընդհանուր կարգի միջոցով արտադրողն իրականացնում է սույն ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված պարտականությունները՝ միայն իր պատասխանատվությամբ երաշխավորում ու հայտարարում է, որ այն արտադրանքը, որի վրա տարածվում են սույն ընթացակարգի 4-րդ կետի դրույթները, համապատասխանում են տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին:

2. **Տեխնիկական փաստաթղթեր.** արտադրողը մշակում է տեխնիկական փաստաթղթերը և ապահովում է դրանց հասանելիությունը՝ սույն ընթացակարգի 4-րդ կետում նշված՝ նշանակման մարմնի համար: Փաստաթղթերը պետք է հնարատան գնահատելու արտադրանքի համապատասխանությունը պատշաճ պահանջներին և պետք է ներառեն դիտարկման փուլի փորձերի արդյունքները:

- 1) տեխնիկական փաստաթղթերով սահմանվում և, հնարավորության դեպքում, դրանք նաև ներառում են արտադրանքի արտադրության և շահագործման վերաբերյալ անհրաժեշտ պահանջներ:
- 2) տեխնիկական փաստաթղթերը, իրենց կիրառելիության սահմաններում, պետք է առնվազն ներառեն հետևյալ բաղադրատեսակները.
 - բ. նախագծման և արտադրության գծագրեր, ենթահանգույցների, բաղադրիչների և շրջանների սխեմաներ,
 - գ. արտադրանքի շահագործումը, նշված գծագրերը և սխեմաներն ընկալելու համար անհրաժեշտ բացատրություններ և նկարագրություններ,

դ. փոխկապակցված ստանդարտների և (կամ) անհրաժեշտ տեխնիկական մասնագրերի ցանկ, որոնց հղումները հրապարակվում են Մտանդարտների ազգային մարմնի կողմից, և, որոնք կիրառվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն: Փոխկապակցված ստանդարտների մասնակի կիրառման դեպքում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այն հատվածները, որոնք ս (կիրառվել) են այդ արտադրանքի վրա,

- ե. նախագծի հաշվարկների արդյունքները, տեղեկատվություն իրականացված փորձաքննությունների մասին,
- զ. իրականացված փորձարկումների մասին արձանագրություն.

3) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո առնվազն 10 տարվա ընթացքում ապահովում է տեխնիկական փաստաթղթերի հասանելիությունը պետական կառավարման մարմիններին:

3. Արտադրողը կիրառում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության և մոնիթորինգի գործընթացն ապահովվի արտադրանքի համապատասխանությունը դրա նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

4. **Հավաստում.** տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը համապատասխան արտադրողի կողմից ընտրված՝ նշանակված մարմնին իրականացնում կամ պատվիրում է փոխկապակցված ստանդարտներով և (կամ) տեխնիկական մասնագրերով սահմանված անհրաժեշտ փորձաքննություն և փորձարկումներ կամ համարժեք փորձարկումներ: Նման փոխկապակցված ստանդարտի և (կամ) տեխնիկական մասնագրերի բացակայության դեպքում համապատասխան նշանակված մարմինը կայացնում է որոշում իրականացվելիք համապատասխան փորձարկումների մասին:

1) նշանակված մարմնին իրականացված փորձաքննության և փորձարկումների հիման վրա տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատ և յուրաքանչյուր հաստատված արտադրանքի համար կցում է իր նույնականացման իր պատասխանատվությամբ, թույլատրում է կցել իր նույնականացման կոդը:

2) արտադրողն արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում ապահովում է համապատասխանության սերտիֆիկատների հասանելիությունը պետական կառավարման մարմիններին:

5. **Համապատասխանության ազգային նշան և համապատասխանության հայտարարագիր.** արտադրողը յուր արտադրանքի վրա մակնշում է տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ պահանջվող համապատասխանության ազգային նշանը ընթացակարգի 4-րդ կետում նշված՝ նշանակված մարմնի պատասխանատվությամբ կցում է վերջինիս նույնականացման արտադրանքը համապատասխանում է արտադրանքի տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահանջներին:

1) արտադրողը կազմում է համապատասխանության գրավոր հայտարարագիր, որը պետք է հասանելի լինի պետական կառավարման մարմիններին՝ արտադրանքի շուկայահանումից հետո 10 տարվա ընթացքում: Համապատասխանության հայտարարագիրը հնարավորություն է տալիս նույնականացնելու այն արտադրանքը, որի համար այն կազմվել է.

2) համապատասխանության հայտարարագրի պատճենը տրամադրվում է համապատասխան մարմիններին՝ համապա

պահանջի դեպքում:

6. Սույն ընթացակարգի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված արտադրողի պարտավորությունները կարող են իրականացվի ներկայացուցչի կողմից՝ նրա անունից և պատասխանատվությամբ, եթե դրանք սահմանված են վերջինիս լիազորագրով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Կ

**Հավելված N 16
ՀՀ կառավարության 2014 թվա
հունվարի 16-ի N 56-Ն որոշ**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Ը

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՐԱԿԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ

1. Համապատասխանություն՝ որակի ամբողջական ապահովմամբ համապատասխանության գնահատման ընթացակարգով արտադրողն իրականացնում է սույն ընթացակարգի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված պարտականությունները, և պատասխանատվության ներքո երաշխավորում և հայտարարում է, որ տվյալ արտադրանքը համապատասխանում է դրա նկարագրող տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին:

2. Արտադրողը նախագծի, արտադրության, վերջնական արտադրանքի տեխնիկական հսկողության և արտադրանքի փոխհամար գործածում է սույն ընթացակարգի 3-րդ կետով սահմանված որակի հաստատված համակարգ, որը և ենթակա է հսկող ինչպես սահմանված է սույն ընթացակարգի 4-րդ կետով:

3. Որակի համակարգ. Արտադրողն իր հայեցողությամբ նշանակված մարմին հայտ է ներկայացնում տվյալ արտադրանքի համակարգի գնահատման համար՝

1) հայտը ներառում է տեղեկություններ հետևյալի մասին՝

ա. արտադրողի անվանումը և գտնվելու վայրը, իսկ այն դեպքում, երբ հայտը ներկայացվում է լիազոր ներկայացուցչի կողմից և անունը և բնակության վայրը,

բ. արտադրության համար նախատեսված արտադրանքի յուրաքանչյուր տեսակի մեկ մոդելի տեխնիկական փաստաթուղթ

2) տեխնիկական փաստաթղթերն իրենց կիրառելիության սահմաններում առնվազն ներառում են հետևյալ բաղադրիչները՝

ա. արտադրանքի ընդհանուր նկարագրություն,

բ. նախագծման և արտադրության գծագրեր, ենթահանգույցների, բաղադրիչների և շղթաների ընթացակարգեր,

գ. արտադրանքի շահագործումը, նշված գծագրերը և ընթացակարգերն ընկալելու համար անհրաժեշտ նկարագրությունն փաստաթղթերում,

դ. փոխկապակցված ստանդարտների և (կամ) անհրաժեշտ տեխնիկական մասնագրերի ցանկ, որոնց հղումները հրապարակված ստանդարտների ազգային մարմնի կողմից և որոնք կիրառվել են ամբողջությամբ կամ մասնակի,

ե. փոխկապակցված ստանդարտների մասնակի կիրառման դեպքում տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն և հատվածները, որոնք որ տարածվել (կիրառվել) են այդ արտադրանքի համար,

զ. եթե չեն կիրառվել փոխկապակցված ստանդարտները, ապա ներկայացվում է այն լուծումների նկարագրությունը, որոնք ապահովվում է տեխնիկական կանոնակարգի պահանջների բավարարումը,

է. տեղեկատվություն նախագծի հաշվարկների և իրականացված փորձաքննությունների արդյունքների վերաբերյալ,

ը. իրականացված փորձարկումների արձանագրությունը,

թ. որակի համակարգին վերաբերող փաստաթղթեր, և

ժ. գրավոր հայտարարագիր այն մասին, որ նման հայտ չի ներկայացվել այլ նշանակված մարմին.

3) որակի համակարգն ապահովում է արտադրանքի համապատասխանությունն արտադրանքի նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Արտադրողի կողմից ընդունված բոլոր տարրերը, պահանջները և դրույթները պետք է փաստաթղթերով համակարգված և պատշաճ՝ գրավոր քաղաքականությունների, ընթացակարգերի և հրահանգների տեսքով:

4) որակի համակարգի փաստաթղթերը՝ ենթադրում են որակին առնչվող ծրագրերի, պլանների, ձեռնարկների և գրանցումների միատեսակ մեկնաբանություններ: Այն, մասնավորապես, պետք է պարունակի համարժեք նկարագրություն՝

ա. արտադրանքի և նախագծի որակին առնչվող պատասխանատվությունների և իրավասությունների կազմակերպչական կառուցվածքի ու որակի նպատակների,

բ. կիրառման համար նախատեսված նախագծի տեխնիկական մասնագրերի՝ ներառյալ ստանդարտների, իսկ այն դեպքում ամբողջովին չեն կիրառվել համապատասխան փոխկապակցված ստանդարտները և (կամ) տեխնիկական մասնագրերը, ապա միջոցների, որոնք կապահովեն արտադրանքի նկատմամբ կիրառվող տեխնիկական կանոնակարգի հիմնական պահանջների

գ. նախագծի հսկողության և նախագծի մեթոդաբանության հավաստման, գործընթացների և համակարգված գործողությունները որոնք օգտագործվելու են այն արտադրանքի տեսակի համար, որի համար նախատեսված է արտադրանքի նախագծում,

դ. համապատասխան արտադրության կիրառվող որակի հսկողության և որակի ապահովման մեթոդների, գործընթացներ համակարգված գործողությունների,

ե. արտադրության ընթացքում, դրանից առաջ և հետո իրականացվող փորձաքննությունների և փորձարկումների և դրան իրականացման հաճախականության,

զ. որակին վերաբերող գրառումների, ինչպես օրինակ իրականացված տեխնիկական հսկողության հաշվետվության, փորձ տվյալների, տրամաչափարկման (կալիբրավորման) տվյալների, աշխատակազմի որակավորման մասին հաշվետվություններ

է. նախագծի և արտադրանքի պահանջվող որակի ապահովման մոնիթորինգի միջոցների և որակի համակարգի արդյունա աշխատանքի մասին տեղեկություններ.

5) նշանակված մարմինը գնահատում է որակի համակարգը որոշելու, թե արդյոք այն բավարարում է սույն ընթացակարգ 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված պահանջներին: Այն պետք է ենթադրի համապատասխանություն նշված պահանջներին, և որակի համակարգի տարրերը պետք է համապատասխանեն փոխկապակցված ստանդարտների և (կամ) տեխնիկական մաս՝ համապատասխան դրույթներին.

6) ի լրումն որակի կառավարման համակարգերում ունեցած փորձին, աուդիտ իրականացնող թիմում պետք է լինի համա արտադրանքի ոլորտի և տեխնոլոգիաների գնահատման փորձառությամբ և տեխնիկական կանոնակարգի կիրառելի պահան իմացությամբ առնվազն մեկ անդամ.

7) աուդիտի գործընթացը ներառում է գնահատման այցելություն արտադրողի տարածք: Աուդիտ իրականացնող թիմը վ՛ սույն ընթացակարգի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տեխնիկական փաստաթղթերը, որոնք կհաստատեն, որ ս կարող է նույնականացնել տեխնիկական կանոնակարգի համապատասխան պահանջները և իրականացնել անհրաժեշտ փորձաքննություն՝ նշված պահանջներին արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով.

8) արտադրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը ծանուցվում է աուդիտի եզրակացության մասին: Ծանուցման մեջ ներլ նաև աուդիտի արդյունքները և գնահատման հիմնավորված որոշումը.

9) արտադրողը պարտավորվում է իրականացնել հաստատված որակի համակարգից բխող պարտավորություններն ինչպ պահպանել դրանց համապատասխանությունն ու արդյունավետությունը.

10) արտադրողը որակի համակարգը հաստատող նշանակված մարմնին տեղեկացնում է որակի համակարգում նախատլ փոփոխությունների մասին.

11) նշանակված մարմինը գնահատում է առաջարկվող բոլոր փոփոխությունները և որոշում ընդունում այն մասին, թե ա փոփոխված համակարգը կշարունակի համապատասխանել սույն ընթացակարգի 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահլ պահանջներին, թե անհրաժեշտ է իրականացնել վերագնահատման աշխատանքներ.

12) նա ծանուցում է արտադրողին իր որոշման մասին: Ծանուցման հետ ներկայացվում են փորձաքննության եզրակացու գնահատման հիմնավորված որոշումը:

4. Նշանակված մարմնի պատասխանատվությամբ իրականացվող հսկողության նպատակը համոզվելն է, որ արտադրող կատարում է հաստատված որակի համակարգից բխող պարտականությունները՝

1) գնահատման նպատակով արտադրողը պետք է թույլ տա նշանակված մարմնին մուտք գործել նախագծման, արտադր տեխնիկական հսկողության, փորձարկումների և պահեստավորման տարածքներ և վերջինիս տրամադրի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, մասնավորապես՝

ա. որակի համակարգի փաստաթղթեր,

